

**Արևելյան Գործընկերության Գազաթնաժողովի
Համատեղ Հռչակագիր
Վիլնյուս, նոյեմբերի 28-29, 2013թ.**

Արևելյան գործընկերություն. ապագային ընդառաջ

Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի՝ պետության կամ կառավարության ղեկավարները և ներկայացուցիչները, Եվրոպական Միության ներկայացուցիչները և ԵՄ անդամ երկրների պետության կամ կառավարության ղեկավարները և ներկայացուցիչները հանդիպեցին Վիլնյուսում՝ 2013թ. նոյեմբերի 28-ից 29-ը: Գազաթնաժողովին ներկա էին նաև Եվրոպական խորհրդարանի նախագահը և Տարածաշրջանների կոմիտեի, Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի, Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Արևելյան գործընկերության տարածաշրջանային և տեղական իշխանությունների համաժողովի, ինչպես նաև Եվրոնեստ խորհրդարանական վեհաժողովի ներկայացուցիչները:

2009թ. մայիսին կայացած Պրահայի գազաթնաժողովը մեկնարկ տվեց ռազմավարական և հավակնոտ Արևելյան գործընկերությանը՝ որպես Եվրոպական հարևանության քաղաքականության առանձնահատուկ ձևաչափի, որը միտված է աջակցելու Արևելյան գործընկերությանը մասնակցող բոլոր արևելաեվրոպական պետություններում կայուն բարեփոխումներ իրականացնելու գործընթացին՝ շահագրգռված գործընկերների համար ԵՄ հետ քաղաքական ասոցացումն ու տնտեսական ինտեգրումը խթանելու նպատակով: Պրահայում և Վարշավայում համաձայնեցված օրակարգում ներառված են Արևելյան գործընկերության ուղղորդող սկզբունքները: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները վերահաստատում են դրանք ամբողջությամբ իրականացնելու իրենց հանձնառությունը:

Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցներն ամփոփեցին 2011թ. սեպտեմբերի Վարշավայի գազաթնաժողովից ի վեր Գործընկերության շրջանակներում գրանցված զգալի առաջընթացը, որը արևելաեվրոպական գործընկերներին ավելի մոտ բերեց ԵՄ-ին, և համաձայնեցին հետագա հավակնոտ օրակարգի շուրջ: Այս համատեքստում նրանք շեշտեցին համաձայնեցված հանձնառություններն իրականացնելու կարևորագույն անհրաժեշտությունը, մասնավորապես՝ քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում բարեփոխումների առումով:

Գազաթնաժողովի մասնակիցները վերահաստատում են Արևելյան գործընկերությանը տրվող կարևորությունը՝ ընդհանուր շահերի և հանձնառությունների, ինչպես նաև ընդհանուր սեփականության, փոխադարձ պատասխանատվության, տարբերակվածության և փոխադարձ հաշվետվողականության հիման վրա: Գործընկերությունը հիմնված է միջազգային իրավունքին և հիմնարար արժեքներին, այդ թվում՝ ժողովրդավարությանը, օրենքի գերակայությանը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը, ինչպես նաև շուկայական տնտեսությանը, կայուն զարգացմանն ու արդյունավետ կառավարմանը հանձնառության վրա:

Արևելյան Գործընկերության մասնակից բոլոր երկրները հանձնառու են այս արժեքներին և միջազգային իրավունքի սկզբունքներին՝ համապատասխան միջազգային գործիքների միջոցով, և ԵՄ անդամ յուրաքանչյուր երկիր նույնպես հանձնառու է վերջիններիս՝ համաձայն Եվրոպական Միության պայմանագրի:

Ընդունելով և ողջունելով արձանագրված առաջընթացը՝ նրանք նաև վկայակոչում են, որ անելիքները դեռ շատ են՝ ժողովրդավարությանը, հիմնարար ազատությունների պաշտպանությանը և օրենքի գերակայությանը շարունակաբար սպառնացող մարտահրավերներին արձագանքելու համար: Այս կապակցությամբ գազաթնաժողովի մասնակիցներն ընդգծում են, որ համընդհանուր այս արժեքներին հետևելու հարցում առաջընթացը կարևորվելու է, մասնավորապես, դատաիրավական մարմինների անկախությունն ու արդյունավետությունն ամրապնդելու, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու և հանրային կառավարման բարեփոխումներ իրականացնելու միջոցով:

Գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Արևելյան գործընկերությունն ամրապնդելու ուղղությամբ Վարշավայի գազաթնաժողովից ի վեր ձեռնարկված քայլերը՝ ժողովրդավարության, բարեկեցության, կայունության և աճող փոխգործակցության ու փոխանակումների համընդհանուր գոտի կառուցելու նպատակով: Շեշտելով ԵՄ և արևելաեվրոպական երկրների միջև ամուր կապերի զարգացման կարևորությունը՝ գազաթնաժողովի մասնակիցները համաձայնում են, որ ավելի սերտ համագործակցության հասնելը կարևոր է եվրոպական մայրցամաքում կայունություն և բարեկեցություն ապահովելու համար: Հակամարտությունների կարգավորումը, փոխվստահության և բարիդրացիական հարաբերությունների կառուցումը կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանում տնտեսական և սոցիալական զարգացման և համագործակցության համար:

Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ջերմորեն ողջունում են ԵՄ և որոշ գործընկեր երկրների միջև նոր հավակնոտ Ասոցացման համաձայնագրեր, ներառյալ՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտիներ (ԽՀԱԱԳ) հաստատելու ուղղությամբ արձանագրված նշանակալի առաջընթացը: Այսօր, հաջորդելով վերջերս ավարտված բանակցություններին, նախաստորագրվել են ԵՄ-Մոլդովա և ԵՄ-Վրաստան Ասոցացման համաձայնագրերը՝ ներառյալ ԽՀԱԱԳ դրույթները:

Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ի գիտություն են ընդունում Ուկրաինայի կառավարության որոշումը ժամանակավորապես առկախել Ասոցացման համաձայնագրի և Խորը և համապարփակ առևտրի գոտու ստորագրման նախապատրաստական գործընթացը: Նրանք նաև արձանագրում են ԵՄ հետ Ուկրաինայի քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման շուրջ հասարակության աննախադեպ աջակցությունը և համախմբվածությունը: ԵՄ-ն և Ուկրաինան վերահաստատում են իրենց հանձնառությունը ստորագրել այդ Համաձայնագիրը՝ ԵՄ-Ուկրաինա 2013թ. գազաթնաժողովին ընդգծված բոլոր երեք ոլորտներում վճռական գործողությունների և շոշափելի առաջընթացի հիման վրա: Այս ուղղությամբ արդեն իսկ արձանագրվել է կարևոր առաջընթաց: Այս Ասոցացման համաձայնագրերը, ներառյալ՝ ԽՀԱԱԳ դրույթները, միտված են սատարելու հեռահար քաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումները և դյուրացնելու ԵՄ հետ, ԵՄ կանոններին և չափանիշներին համապարփակ մոտարկումը: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են ԵՄ և Ադրբեջանի Հանրապետության միջև Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցություններում

արձանագրված առաջընթացը և, հիմնվելով երկկողմ իրավապայմանագրային հարաբերությունների վրա, կոչ են անում շարունակել առաջընթացը:

ԵՄ պատրաստակամ է մեկնարկել ԽՀԱԱԳ շուրջ բանակցությունները, որպես Ասոցացման համաձայնագրի մաս, հետևելով Առևտրի համաշխարհային կազմակերպության Ադրբեյջանի անդամակցությանը: ԵՄ-ն և Հայաստանն այսօր վերահաստատեցին Արևելյան գործընկերության շրջանակներում համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու իրենց հանձնառությունը՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում, շեշտելով իրենց հարաբերությունների հիմքը վերանայելու և արդիականացնելու կարևորությունը: Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության շրջանակներում գազաթնաժողովի մասնակիցները վերահաստատում են յուրաքանչյուր գործընկերոջ ինքնիշխան իրավունքը ազատ ընտրելու Եվրոպական Միության հետ իր հարաբերություններում հավակնության մակարդակն ու նպատակները:

Շարժունակության խթանումն անվտանգ և լավ կառավարվող միջավայրում մնում է Արևելյան գործընկերության կարևոր նպատակը: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ջերմորեն ողջունում են որոշ գործընկերների կողմից արձանագրված առաջընթացը վիզաների ազատականացման ուղղությամբ՝ Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրերի միջոցով: Այս համատեքստում նրանք ողջունում են նաև Վիզաների դյուրացման և հետընդունման համաձայնագրերի կնքումը և իրականացումը:

Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները վերահաստատում են, որ իրենք ճանաչում են որոշ գործընկերների Եվրոպական ձգտումները և Եվրոպական ընտրությունը և նրանց հանձնառությունը կառուցելու խորը և կայուն ժողովրդավարություն: Այս համատեքստում նրանք արձանագրում են այդ գործընկերների՝ հիշյալ նպատակներին հասնելու հանձնառությունը: Մասնակիցները վերահաստատում են Գործընկերության առանձնահատուկ դերը՝ աջակցելու նրանց, ովքեր ԵՄ հետ ավելի սերտ հարաբերությունների են ձգտում: Ասոցացման համաձայնագրերը, ներառյալ՝ ԽՀԱԱԳ դրույթները, կարևոր քայլ են այս ուղղությամբ: Ընդհանուր արժեքների նկատմամբ հարգանքը և Ասոցացման համաձայնագրերի իրականացումը կնպաստեն մեր հարաբերությունների ապագա աստիճանական զարգացմանը:

Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները նախանշեցին հետևյալ նպատակները՝ մինչև 2015 թվականը Գործընկերության կողմից հասնելու համար.

- Խորացնել ԵՄ և գործընկերների միջև հետագա հարաբերություններն ու համագործակցությունը;
- Հետագա քայլեր ձեռնարկել ժողովրդավարության ամրապնդման, մարդու իրավունքների և օրենքի գերակայության նկատմամբ հարգանքը երաշխավորելու, ներառյալ՝ դատաիրավական համակարգի բարեփոխմանը հետամուտ լինելու և օրենքի կիրառումն ամրապնդելու միջոցով;
- Ապահովել, համապատասխան դեպքերում, Ասոցացման համաձայնագրերի/ԽՀԱԱԳ դրույթների ստորագրումը և դրանց նախնական կիրառումը մինչև 2014թ. աշունը, այդպիսով սկսելով իրականացման փուլը և ապահովելով Ասոցացման համաձայնագրերի վավերացման գործընթացի առաջխաղացումը;

- Ձևավորել, համապատասխան դեպքերում, Ասոցացման օրակարգեր՝ հնարավորինս սեղմ ժամկետներում 2014թ.-ին՝ որպես միջոց Ասոցացման համաձայնագրերը/ԽՀԱԱԳ դրույթները նախապատրաստելու և իրականացնելու համար, ինչպես նաև՝ որպես դիտարկման հիմնական գործիք;
- Շարունակել ԵՄ օժանդակության տրամադրումը՝ գործընկերների բարեփոխումների օրակարգերին աջակցելու նպատակով, հաշվի առնելով Ասոցացման համաձայնագրերի, ներառյալ՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտիների ժամանակավոր կիրառումն ու իրականացումը;
- Արևելաեվրոպական համապատասխան գործընկերների կողմից անդամակցում Համաեվրոպա-միջերկրածովյան ծագման արտոնյալ կանոնների տարածաշրջանային կոնվենցիային և առաջխաղացում Ընդհանուր տարանցիկ կոնվենցիային անդամակցման գործընթացում՝ որպես տնտեսական ինտեգրման ուղղությամբ ձեռնարկվելիք հետագա քայլեր;
- Աստիճանական քայլերի միջոցով առաջխաղացում դեպի վիզաների ազատականացված ռեժիմ՝ համապատասխան ընթացակարգերով, առանձնացված մոտեցման հիմքով՝ պայմանով, որ բավարարված լինեն լավ կառավարվող և անվտանգ շարժունակության համար պահանջները;
- Արևելյան գործընկերության գործարարության ձևաչափի ամրապնդում, ներառյալ՝ գործընկեր երկրներում գործարար միջավայրի զգալի բարելավման միջոցով՝ ի նպաստ տեղական, տարածաշրջանային և եվրոպական ՓՄՁ-երի (փոքր և միջին ձեռնարկություններ) և ընկերությունների;
- Աստիճանաբար զարգացնել Գիտելիքի և նորարարության ընդհանուր տարածք՝ ի մի բերելով հետազոտությունների և նորարարության բնագավառում համագործակցության առկա ուղղությունները;
- Արևելյան գործընկերության բազմակողմ ձևաչափի հետագա ամրապնդում;
- Տրանսպորտի բոլոր բնագավառներում ձգտել հասնել կարգավորիչ դաշտի հետագա մոտարկմանը և իրականացնել տրանսպորտային ենթակառուցվածքային նախագծեր Արևելյան գործընկերության տրանսպորտային ցանցի երկայնքով՝ առկա ԵՄ ծրագրերի և գործիքների միջոցով, ձգտելով սերտորեն ներգրավել եվրոպական և միջազգային ֆինանսական կառույցներին և սահմանել առաջնային նախագծեր, որոնք ուղղված կլինեն TEN-T (Տրանս-եվրոպական տրանսպորտային ցանց) հիմնական ցանցի հետ հաղորդակցության բարելավմանը;
- Խրախուսել և ամրապնդել բազմակողմ ռազմավարական նախագծերը՝ շահագրգիռ երկրների, ինչպես նաև Էներգետիկ համայնքի համար ընդհանուր հետաքրքրություն ունեցող ծրագրերի իրականացման համար՝ բարենպաստ, թափանցիկ, կարգավորիչ և ֆինանսական միջավայր ստեղծելու միջոցով;
- Պետական կառավարման մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների հետագա ամրապնդում՝ ԵՄ կողմից աջակցությամբ;
- Խրախուսել և ամրապնդել տեսանելի ու արդյունավետ բազմակողմ Առաջատար նախաձեռնությունները, ներառյալ, համապատասխան դեպքերում, համատեղելով

ուրուտային քաղաքականության շուրջ երկխոսությունը և ենթակառուցվածքներին աջակցությունը;

- Մարդկանց միջև շփումների հետագա ամրապնդում, ներառյալ՝ «Էրազմուս+», «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրերը և «Հորիզոն 2020» ծրագրի շրջանակներում գործող «Մարի Սկլոդովսկայա-Կյուրի» նախագիծը Արևելյան գործընկերության երկրների մասնակիցներին հասանելի դարձնելու միջոցով;
- Արևելյան գործընկերության համար Տեսանելիության ռազմավարության իրականացում:

Գազաթնաժողովի մասնակիցներն ընդգծում են, որ Ասոցացման համաձայնագրերի և, համապատասխան դեպքերում, ԽՀԱԱԳ դրույթների ապագա արդյունավետ իրականացումը՝ բարեփոխումներով զուգորդված, կհանգեցնի ԵՄ օրենսդրության և չափանիշների հետ համապարփակ մոտարկմանը՝ գործընկերներին առաջնորդելով դեպի ԵՄ ներքին շուկային աստիճանական տնտեսական ինտեգրմանը և, այդպիսով, տնտեսական գոտու ստեղծմանը:

Նրանք պարտավորվում են հաջորդ գազաթնաժողովին վերանայել հնարավոր հետագա քայլերը, որոնք կարող են ձեռնարկվել տնտեսական ինտեգրման առաջխաղացման համար՝ նպատակ ունենալով ստեղծել տնտեսական գոտի, սույն Հռչակագրի համապատասխան մասերի և Ասոցացման համաձայնագրերի/ԽՀԱԱԳ դրույթների իրականացման լույսի ներքո: Այս նպատակով կոչ է արվում Եվրոպական հանձնաժողովին, որպեսզի այն իրականացնի իրագործելիության ուսումնասիրություն՝ համապատասխան ժամկետներում: Գազաթնաժողովի մասնակիցները համաձայնում են, որ գործընկերների և ԵՄ միջև տնտեսական ինտեգրման նման հավակնոտ երկարաժամկետ տեսլականը ցանկալի է և նպաստում է նաև ավելի երկարաժամկետ նպատակի իրականացմանը, այն է՝ հիմնել Առևտրի համաշխարհային կազմակերպության կանոնների և ինքնիշխան ընտրության վրա խարսխված՝ տնտեսական բարեկեցության ընդհանուր գոտի՝ համայն Եվրոպայում և դրանից դուրս:

ԵՄ և իր արևելաեվրոպական գործընկերների միջև աճող հարաբերությունները, մասնավորապես՝ տնտեսական ինտեգրման բնագավառում, կարող են ունենալ նշանակալի ներդրում Եվրոպայի միջազգային մրցունակությունն ամրապնդելու և կայուն, ընդգրկուն, խելամիտ աճ և աշխատատեղեր ստեղծելու համար՝ դրանով իսկ խթանելով կայունությանը:

Ավելի մեծ տարբերակվածությունը և փոխադարձ պատասխանատվությունը հնարավորություն կընձեռեն առանձին գործընկերներին ավելի լավ գնահատել իրենց ձգտումները և կարիքները: Բարեփոխումների ընթացքով կայանանավորվի համագործակցության ինտենսիվությունը, և բարեփոխումների մեջ առավել ներգրավված գործընկերներն առավել շատ կշահեն ԵՄ հետ իրենց հարաբերություններից՝ խրախուսման վրա հիմնված մոտեցման («ավելին ավելիի համար») հիման վրա՝ ինչպես նախատեսված է վերանայված Եվրոպական Հարևանության քաղաքականությամբ: Խորացված և կայուն բարեփոխումների ջանքերը ծառայում են ընդհանուր շահին, այն է՝ օգնել արևելաեվրոպական երկրների առաջընթացին դեպի խորը և կայուն ժողովրդավարություններ, որտեղ գերիշխում են արդյունավետ կառավարումը, օրենքի գերակայությունը և շուկայական սկզբունքների վրա զարգացող տնտեսությունները՝ հավասար և կայուն զարգացումն ամրապնդելու համար: Գազաթնաժողովի մասնակիցներն ընդգծում են, որ այս հավակնոտ օրակարգը պահանջում է հասարակության ավելի լայն

շերտերի ներգրավումը և, հետևաբար, նրանք ողջունում են խորհրդարանների, քաղաքացիական հասարակության, տեղական և տարածաշրջանային իշխանությունների, գործարար շրջանակների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավումը Արևելյան գործընկերության օրակարգում:

Գազաթնաժողովի մասնակիցները համաձայնեցին Գործընկերության 2014-2015թթ. ժամանակահատվածի համար վերոնշյալ ընդհանուր քաղաքական ուղենիշների շուրջ: Սույն հռչակագիրը՝ նոր Ասոցացման օրակարգերի և երկկողմ հարաբերություններն ուղենշող ներկայիս և ապագա այլ փաստաթղթերի ու բազմակողմ պլատֆորմների աշխատանքային ծրագրերի հետ մեկտեղ կձառայեն որպես հստակ գործողությունների ծրագիր Արևելյան գործընկերության համար 2014-2015թթ.-ին:

2011-2013թթ. ընթացքում արձանագրված ձեռքբերումները և 2014-2015թթ. օրակարգը

Վարչավայից Վիլնյուս ժամանակահատվածում արձանագրված առաջընթացը

1. Վիլնյուսի գազաթնաժողովը որոշիչ պահ է Արևելյան գործընկերության երկրների հետ ԵՄ հարաբերությունների առումով: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Վարչավայի գազաթնաժողովից ի վեր Արևելյան գործընկերության շրջանակներում արձանագրված առաջընթացը՝ քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման խթանման, անվտանգ և արդյունավետ կառավարվող միջավայրում շարժունակության դյուրացման, բազմակողմ հարթության ամրապնդման և ոլորտային համագործակցությունը խրախուսելու առումներով: Նրանք կարևորում են Արևելյան գործընկերության ճանապարհային քարտեզի դերը՝ Արևելյան գործընկերության նպատակների իրականացման դիտարկման և ուղղորդման տեսանկյունից:

2. Գազաթնաժողովի մասնակիցներն ակնկալում են 2014թ.-ին հնարավորինս սեղմ ժամկետներում Վրաստանի և Մոլդովայի հետ Ասոցացման օրակարգերի կնքումը՝ որպես Ասոցացման համաձայնագրերի իրականացումը նախապատրաստող և դյուրացնող գործիքներ, որոնք կօգնեն ստեղծել ԵՄ հետ քաղաքական ասոցացումն ու տնտեսական ինտեգրումը դիտարկելու և զարգացնելու համապարփակ ու գործնական շրջանակ: Նրանք ողջունում են Ուկրաինայի հետ Ասոցացման օրակարգի իրականացմանն ուղղված համատեղ աշխատանքները:

3. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները գնահատում են գործընկերների էական ջանքերը արդիականացմանն ուղղված երկարաժամկետ համապարփակ բարեփոխումներ նախաձեռնելու և իրականացնելու գործում, ինչպես նաև հետագայում դրանք շարունակելու հանձնառությունը: Նրանք գոհունակություն են արտահայտում ընդլայնված երկխոսության և համագործակցության միջոցով գործընկերների բարեփոխումներին ուղղված ԵՄ ավելացված աջակցության կապակցությամբ՝ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ մակարդակով:

4. Գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են 2010-2013թթ. համար 2,5 մլրդ. եվրո ԵՄ ֆինանսական նշանակալի հանձնառությունը՝ ուղղված ժողովրդավարական զարգացման ու պետական կառավարման մարմինների ամրապնդմանը, խելամիտ, կայուն և ընդգրկուն

աճին, ինչպես նաև տնտեսական զարգացմանը: Աջակցություն հայտնելով խրախուսման վրա հիմնված մոտեցման իրականացմանը, նրանք արձանագրում են 2012-2013թթ. համար լրացուցիչ նշանակալի միջոցների հատկացումը խորը և կայուն ժողովրդավարության կառուցման գործում ամենաշատ առաջընթաց ցուցաբերած երկրների համար: Նրանք ճանաչում են պետական մարմինների համապարփակ զարգացման նախաձեռնության շրջանակներում նախանշված բարեփոխումների հիմնական ոլորտներում գործադրված լուրջ ջանքերը և այդ նպատակով ԵՄ կողմից տրամադրվող կարևոր աջակցությունը: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները գոհունակություն են արտահայտում, որ Եվրոպական ներդրումային բանկը ավելացրել է գործընկեր երկրներում վարկավորումը 170 մլն. եվրոյից՝ 2008թ-ին, մինչև 934 մլն. եվրո՝ անցյալ տարի, և որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը համալրում է մասնավոր հատվածի զարգացմանն ու ենթակառուցվածքային վերականգմանն ուղղված իր շարունակական աջակցությունը քաղաքական երկխոսության և խորհրդատվության միջոցով: Նրանք ողջունում են ԵՄ անդամ պետությունների ավելացված ջանքերն Արևելյան գործընկերության նպատակներին աջակցելու ուղղությամբ, ներառյալ զարգացմանն ուղղված երկկողմ համագործակցության միջոցով:

5. Քաղաքացիների շարժունակությունը լավ կառավարվող և անվտանգ միջավայրում Արևելյան գործընկերության կարևոր տարրերից է: Վիզային ռեժիմի ազատականացումը շարունակում է ընդհանուր նպատակ լինել ինչպես առանձին գործընկեր երկրների, այնպես էլ ԵՄ համար՝ հոգուտ լայն հասարակության շահերի: Վիզաների ազատականացված ռեժիմի համար պատրաստվածությունը գնահատվելու է առանձնացված մոտեցման հիմքով՝ պայմանով, որ ապահովված կլինեն լավ կառավարվող և անվտանգ շարժունակության համար անհրաժեշտ պահանջները: Վիզաների դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերի արդյունավետ իրականացման առաջին քայլը արդեն ձեռնարկվել է որոշ գործընկեր երկրներում:

Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Հայաստանի Հանրապետության հետ վիզաների դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերի կնքումը և ակնկալում են դրանց արդյունավետ իրականացումը: Նրանք ակնկալում են ընդլայնված շարժունակության ուղղությամբ հետագա քայլերի ձեռնարկումը ԵՄ և Հայաստանի միջև: Նրանք ողջունում են վիզաների դյուրացման մասին համաձայնագրի ստորագրումը Ադրբեջանի Հանրապետության հետ այսօր և ակնկալում են, որ առաջիկայում ստորագրվելու է ռեադմիսիայի մասին համաձայնագիրը: Նրանք ակնկալում են ընդլայնված շարժունակության ուղղությամբ հետագա քայլերի ձեռնարկումը ԵՄ և Ադրբեջանի միջև: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները նաև ակնկալում են, որ վիզաների դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերի շուրջ բանակցություններ կմեկնարկեն Բելառուսի հետ: Նրանք նաև խրախուսում են ԵՄ Մուտքի վիզաների կանոնակարգի ընձեռած ճկուն հնարավորությունների օգտագործումը:

Այս համատեքստում Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Մոլդովայի Հանրապետության ձեռքբերումները Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրով սահմանված միջոցառումները իրականացնելու գործում և դրա վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի վերջին զեկույցի ներկայացումը: Նրանք ի գիտություն են ընդունում Եվրոպական հանձնաժողովի օրենսդրական առաջարկը՝ լրամշակելու EC 539/2001 կանոնակարգը: Նրանք նաև ողջունում են Ուկրաինայի կողմից արձանագրված զգալի առաջընթացը Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի առաջին փուլն ավարտելու ուղղությամբ և Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի առաջին փուլի իրականացման ընթացքում Վրաստանի կողմից արձանագրած լավ

առաջընթացը: Նրանք ակնկալում են այս երկրների հետ վիզաների ազատականացման երկխոսության ուղղությամբ հետագա առաջընթաց: Այդ ծրագրերը պետք է որպես նմուշ ծառայեն ԵՄ հետ վիզաների ազատականացման շուրջ երկխոսություն սկսել ցանկացող այլ գործընկեր երկրների համար՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի առանձնահատկություններն ու առաջընթացը:

6. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Միգրացիայի և շարժունակության գլոբալ մոտեցմանը համապատասխան Մոլդովայի Հանրապետության, Վրաստանի և Հայաստանի Հանրապետության հետ Շարժունակության շուրջ գործընկերության արդյունավետ իրականացումը: Նրանք արձանագրում են, որ ԵՄ և Մոլդովայի Հանրապետության միջև Շարժունակության շուրջ գործընկերության գնահատումը և Միգրացիայի ընդլայնված պատկերի զարգացումն ապացուցել են միգրացիայի ոլորտում փաստերի վրա հիմնված քաղաքականության կարևորությունը, ինչը կարող է նաև ուղղորդել ԵՄ և այլ գործընկեր երկրների միջև համագործակցությունը Շարժունակության շուրջ գործընկերությունների շրջանակներում: Նրանք նաև ողջունում են Ադրբեջանի Հանրապետության հետ Շարժունակության շուրջ գործընկերության կնքման ուղղությամբ արձանագրված առաջընթացը և ակնկալում են առաջիկայում դրա ստորագրումը և նախատեսում են նման շրջանակներ հաստատել արևելաեվրոպական մյուս գործընկերների հետ: Ճանաչելով Շարժունակության շուրջ գործընկերության կարևորությունը՝ որպես միգրացիայի և շարժունակության ոլորտում համագործակցությունն ամրապնդող հիմնական երկկողմանի շրջանակ, գազաթնաժողովի մասնակիցները կոչ են անում մասնակից ԵՄ անդամ պետություններին ու արևելաեվրոպական գործընկերներին ավելի մեծ ներգրավվածություն ցուցաբերել դրանց արդյունավետ իրականացման գործում:

7. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են ընդլայնված համագործակցությունն ու արձանագրված առաջընթացն ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտներում, ինչպես նաև 2013թ. հոկտեմբերի 7-ից 8-ը Լյուքսեմբուրգում կայացած Արևելյան գործընկերության՝ արդարադատության և ներքին գործերի առաջին նախարարական հանդիպման արդյունքները: Այս բնագավառում բարեփոխումների արդյունավետ իրականացումը նպաստելու է ԵՄ և իր գործընկերների միջև համագործակցության հետագա զարգացմանը: Արդարադատության ոլորտում մի քանի երկրներում մեկնարկել և իրականացվել են համագործակցության խոշոր ծրագրեր՝ նպաստելով ժողովրդավարական կառավարման բարելավմանը:

8. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Արևելյան գործընկերության բազմակողմ հարթության շրջանակներում ծավալվող գործունեության աճը, որը համալրում է նաև երկկողմ երկխոսությունն ու համագործակցությունը: Նրանք ընդգծում են Արևելյան գործընկերության դերակատարների ներգրավվածության կարևորությունը Գործընկերության բազմակողմ ձևաչափի բոլոր համապատասխան գործընթացներում: Գործընկերության բազմակողմ ձևաչափը կարևոր հարթակ է ծառայել բարեփոխումների և արդիականացման ուղղությամբ գործընկեր երկրների կողմից ձեռնարկվող քայլերի վերաբերյալ տեղեկատվության և փորձի փոխանակման համար: Այն լրացուցիչ հնարավորություն է հանդիսացել գործընկերների բարեփոխումների ջանքերին աջակցելու և, համապատասխան դեպքերում, մոտարկումը դյուրացնելու առումով: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են աճող բազմակողմ համագործակցությունը այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են առևտուրն ու տնտեսական համագործակցությունը, վիճակագրությունը, մաքսային, հարկային ոլորտները,

սահմանների կառավարումը, էներգետիկան, տրանսպորտը, բնապահպանությունն ու կլիմայի փոփոխությունը, կրթությունը, երիտասարդության և ուսուցման հետ կապված հարցերը, մշակույթը, գործարար միջավայրը, այդ թվում ՓՄՁ վերաբերյալ քաղաքականությունը, աղետային ռիսկերի նվազեցումը, գիտահետազոտական և նորարար գործունեությունը, տեղեկատվական հասարակությունն ու զանգվածային լրատվամիջոցները, գյուղատնտեսությունն ու գյուղական վայրերի զարգացումը, միգրացիայի և ապաստանի ոլորտները, պետական կառավարման ոլորտում բարեփոխումները, կոռուպցիայի դեմ պայքարը: Այս առումով Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են համագործակցության նախաձեռնությունների իրականացման առումով արձանագրված առաջընթացը, ներառյալ Առաջատար նախաձեռնությունները, ինչը շոշափելի օգուտներ է բերում գործընկեր երկրների քաղաքացիներին:

9. Գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Արևելյան գործընկերության ոչ-պաշտոնական երկխոսությունների մեկնարկը և հաջողությամբ կայացած բոլոր երեք փուլերը (2012թ. հուլիսին՝ Քիշնևում, 2013թ. փետրվարին՝ Թբիլիսիում, և 2013թ. սեպտեմբերին՝ Երևանում): Այս ձևաչափը խթանել է արտաքին գործերի նախարարների միջև կանոնավոր, ոչ-պաշտոնական փոխանակումները՝ ինչպես Արևելյան գործընկերության օրակարգի, այնպես էլ արտաքին քաղաքականությանն առնչվող, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ և զարգացրել է Արևելյան գործընկերության շրջանակներում համագործակցությունը մի շարք կարևոր ոլորտներում՝ գործընկեր երկրների համապատասխան նախարարների ներգրավվածությամբ: Նրանք ցանկանում են, համապատասխան դեպքերում, խորացնել քաղաքական ասոցացումը, ավելացնել քաղաքական և անվտանգության քաղաքականության ներդաշնակեցումը և արտաքին քաղաքականության ոլորտում արդյունավետությունը:

10. Գազաթնաժողովի մասնակիցները ընդգծում են արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում երկխոսության և համագործակցության կարևորությունը՝ որպես ԵՄ և շահագրգռված գործընկերների միջև քաղաքական ասոցացման ամրապնդման կարևոր բաղադրիչ: Նրանք ողջունում են ԸԱՊՔ (ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության) հարցերով փորձագիտական խմբի ստեղծումը՝ ԸԱՊՔ հարցերով զարգացումների վերաբերյալ երկխոսությունը դյուրացնելու նպատակով, ներառյալ ԸԱՊՔ ճգնաժամային կառավարման գործողությունների ու վարժանքների շուրջ: Ավելին, Գործընկերության երկկողմ հարթության ներքո, ԸԱՊՔ մասնակցության շրջանակային համաձայնագրերի կնքումն ու իրականացումը գործընկեր երկրների համար իրավական հիմք և գործնական միջոցներ է ապահովում ԵՄ կողմից գլխավորած ճգնաժամային կառավարման գործողություններում ներգրավվելու համար: Նրանք ողջունում են Ուկրաինայի ներդրումը ԵՄ մի շարք գործողություններում: Գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Մոլդովայի Հանրապետության հետ Մասնակցության շրջանակային համաձայնագրի ստորագրումն ու ուժի մեջ մտնելը, ինչպես նաև ԵՄ գործողություններին մասնակցելու հետաքրքրությունը, ողջունում են Մասնակցության շրջանակային համաձայնագրի ստորագրումը Վրաստանի հետ այսօր և արձանագրում են, որ քննարկվում է այլ գործընկերների հետ բանակցություններ մեկնարկելը: Այս համատեքստում գազաթնաժողովի մասնակիցները նաև կարևորում են Ծառայողական տեղեկատվության փոխանակման մասին շրջանակային համաձայնագրերի կնքումը ԸԱՊՔ առաքելություններին մասնակցող շահագրգռված գործընկերների հետ:

11. Տրանսպորտի հարցերով համագործակցության վերաբերյալ, Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են ԵՄ և արևելաեվրոպական տարածաշրջանի միջև ենթակառուցվածքային կապերի բարելավման ուղղությամբ արձանագրված առաջընթացը: Նրանք վկայակոչում են 2013թ. հոկտեմբերի 9-ին Լյուքսեմբուրգում կայացած Արևելյան գործընկերության՝ տրանսպորտի հարցերով նախարարական հանդիպման ժամանակ Արևելյան գործընկերության տարածաշրջանային տրանսպորտային ցանցի ուղենշող քարտեզի ընդունումը, որն ուրվագծում է Տրանս-եվրոպական տրանսպորտային ցանցի հետ կապերը և դրան առնչվող առաջնահերթ նախագծերի ցանկը՝ որպես տրանսպորտային և նյութատեխնիկական կապերի բարելավման ուղղությամբ ձեռնարկվող առաջին հստակ քայլեր: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Ուկրաինայի հետ Ընդհանուր ավիացիոն գոտու համաձայնագրի նախաստորագրումը և նման համաձայնագրերի հաջողությամբ կնքումն ու իրականացումը Վրաստանի և Մոլդովայի Հանրապետության հետ, ինչի շնորհիվ ճամփորդողներին ընձեռնվում են ընտրության ավելի լավ հնարավորություններ: Նրանք ողջունում են Ադրբեյջանի հետ Ընդհանուր ավիացիոն գոտու համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկը: Նրանք նաև արձանագրում են Հայաստանի պատրաստակամությունը բանակցություններ սկսել Ընդհանուր ավիացիոն գոտու համաձայնագրի շուրջ: Բոլոր այդ համաձայնագրերը կարևոր ներդրում են ապահովում Արևելյան գործընկերության հիմնական նպատակի իրականացման՝ ԵՄ իր գործընկեր երկրներին ավելի մոտ դարձնելու առումով:

12. Շահագրգիռ մասնակիցները ողջունում են փոխադարձ էներգետիկ անվտանգության բարձրացմանն ուղղված համատեղ աշխատանքը, այդ թվում՝ ցանցի զարգացումների և ԵՄ ներքին էներգետիկ շուկային աստիճանաբար ինտեգրվելու և միջսահմանային առևտուրը խթանելու միջոցով: Նրանք խրախուսելու են էներգետիկ անվտանգության, տրանսպորտի և մատակարարման ընդգրկուն և բաց քաղաքականություն: Նրանք ի գիտություն են ընդունում Հարավային միջանցքի բացման ուղղությամբ կարևոր զարգացումները, ներառյալ Հարավկովկասյան խողովակաշարի, Տրանս-ադրիատիկ խողովակաշարի ծրագրավորված արդիականացումը, ինչպես նաև Կասպից տարածաշրջանը ԵՄ հետ անմիջապես կապող գազային փոխադրման այլ ենթակառուցվածքների զարգացումը: Նրանք արձանագրում են Ադրբեյջանի ռազմավարական դերը Եվրոպայի համար էներգակիրների մատակարարման դիվերսիֆիկացման առումով: Նրանք ակնկալում են ԵՄ շարունակական աջակցությունն Ուկրաինայի գազային փոխադրման համակարգի արդիականացման համար՝ որպես եվրոպական ցանցի կարևոր մաս, ինչպես նաև Ուկրաինայի շարունակական ջանքերը՝ գազամատակարարման հատվածում հետագա անհրաժեշտ բարեփոխումներ ձեռնարկելու ուղղությամբ, և միջազգային ֆինանսական կառույցների հետ երկխոսության ավարտը՝ արտակարգ իրավիճակներում գազի տարանցման նախագծի առաջին վարկը տրամադրելու համար: Նրանք արձանագրում են ԽՀԱԱԳ շրջանակներում էներգետիկային առնչվող կարևոր դրույթները, Ուկրաինայի և Մոլդովայի Հանրապետության աշխատանքը էներգետիկ համայնքի շրջանակներում ստանձնած պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ, Ուկրաինայի հետ ընթացող աշխատանքը երկկողմանի գազային հոսքեր ապահովելու ուղղությամբ, Խորվաթիան, Հունգարիան և Ուկրաինան կապող Ադրիատիկ գազային միջանցքի զարգացումը, Ադրբեյջան-Վրաստան-Ռումինիա կապող գազատարի (AGRI LNG նախագծի) նախապատրաստման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը, Մոլդովայի Հանրապետության և ԵՄ միջև գազի և էլեկտրականության փոխմիացությունների առաջնահերթ նախագծերի որոշման հարցում առաջընթացը: Նրանք նաև ի գիտություն են ընդունում էներգետիկ համայնքին անդամակցելու Վրաստանի

հայտը: Նրանք արձանագրում են Էներգետիկ համայնքում Հայաստանի ակտիվ դիտորդությունը: Քննարկումներն ապացուցել են, որ կան իրական հնարավորություններ, որպեսզի Ուկրաինան գազամատակարարման ասպարեզում հանդես գա որպես արևելաեվրոպական կարևոր հանգույց՝ գազի փոխադրման և պահպանման կարողությունների օգտագործման արդյունավետ երկարաժամկետ ռազմավարությունը մշակելուց հետո՝ Էներգետիկ համայնքի շրջանակներում Ուկրաինայի պարտավորություններին համահունչ և բոլոր համապատասխան կողմերի ներգրավվածությամբ:

Գազաթնաժողովի մասնակիցներն արձանագրում են Եվրոպայի Էներգետիկ անվտանգության առումով Բելառուսի կարևոր ներդրումը՝ ապահովելով Էներգակիրների էական տարանցում, և նրանք աջակցություն են արտահայտում հետագա երկխոսությանը՝ Եվրոպական հանձնաժողովի և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև 2009թ. Համագործակցության հռչակագրի հիման վրա:

Երկխոսությունը կենտրոնացել է Էներգետիկ անվտանգության, կարգավորիչ հարցերի, ցանցերի, Էներգաարդյունավետության և վերականգնվող Էներգետիկայի շուրջ: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Ուկրաինայի լիարժեք մասնակցությունը, ներառյալ անկախ փորձաքննության գործընթացը, ինչպես նաև Հայաստանի ու Բելառուսի ակտիվ մասնակցությունը ԵՄ միջուկային սթրես թեստերին: Նրանք ողջունում են միջուկային անվտանգության ոլորտում աճող համագործակցությունը և խրախուսում թափանցիկությունը, տեղեկատվության հասանելիությունը և միջուկային անվտանգությանն ու բնապահպանությանն առնչվող միջազգային համաձայնագրերի դրույթներին լիակատար համապատասխանությունը:

13. Գազաթնաժողովի մասնակիցները շեշտում են կրթության, երիտասարդության և մշակույթի ոլորտների կարևորությունը: Նրանք ողջունում են ԵՄ և արևելաեվրոպական գործընկերների միջև կրթական փոխանակումների ու համագործակցության աճը՝ «Տեմպուս» և «Էրազմուս Մունդուս» ծրագրերի միջոցով, որոնց շնորհիվ, 2011թ-ից սկսած, հնարավոր է դարձել ֆինանսավորել ավելի շատ թվով փոխանակումներ և կրթաթոշակներ ավելի շատ մասնակիցների համար: Ի լրումն, Արևելյան գործընկերության «Երիտասարդության պատուհան» ծրագրի շնորհիվ էապես ավելացել է համատեղ նախագծերում ներգրավված երիտասարդների և երիտասարդ աշխատակիցների թիվը: Գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են այն նպատակները, որոնք տեղ են գտել մշակույթի հարցերով 2013թ. հունիսի 27-ից 28-ը Թբիլիսիում կայացած Արևելյան գործընկերության նախարարական հանդիպմանը ընդունված Հռչակագրում, ինչպես նաև կրթության հարցերով 2013թ. սեպտեմբերի 13-ին Երևանում կայացած Արևելյան գործընկերության ոչ-պաշտոնական երկխոսության արդյունքները: Նրանք նաև ողջունում են Արևելյան գործընկերության Երիտասարդության ֆորումի մեկնարկը, որը տեղի է ունեցել 2013թ. հոկտեմբերի 22-ից 25-ը՝ Կաունասում:

14. Գազաթնաժողովի մասնակիցները ընդգծում են գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման դերը գործընկեր երկրների կայուն և ընդգրկուն զարգացման հարցում, ինչպես նաև իրենց բնակչությանն անվտանգ, բազմազան և բարձրորակ սնունդ ապահովելու կարևորությունը: Նրանք ակնկալում են ընդլայնված ոլորտային համագործակցություն՝ Եվրոպական հարևանության ծրագրի Գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման նախաձեռնության (ENPARD) շրջանակներում: Գազաթնաժողովի մասնակիցները նաև ողջունում են գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման հարցերով բազմակողմ փորձագիտական խմբի ստեղծումը՝

արտացոլելով գործընկեր երկրներում գյուղագործության և գյուղական համայնքների կարևորությունը: Նրանք նաև ողջունում են տարածաշրջանային զարգացման խոշոր ծրագրերը, որոնք օժանդակում են գործընկեր երկրներին նվազեցնելու տնտեսական, սոցիալական և տարածաշրջանային անհավասարությունները: Գազաթնաժողովի մասնակիցները շեշտում են Աշխարհագրական անվանումների պաշտպանության կարևորությունը ԵՄ և գործընկերների միջև գյուղատնտեսական ապրանքների և սննդամթերքի արդար առևտրային հարաբերությունները զարգացնելու տեսանկյունից՝ ողջունելով այդպիսի համաձայնագրերի կնքումը Վրաստանի և Մոլդովայի Հանրապետության հետ և Ուկրաինայի ԽՀԱԱԳ նախաստորագրված տեքստում համապատասխան դրույթների ընդգրկումը:

15. Գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են գիտահետազոտական և նորարարական գործունեության հարցերով համագործակցության ընդլայնումը: Շարունակել է աճել 7-րդ շրջանակային ծրագրին գիտաշխատողների, գիտահետազոտական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի, ներառյալ արդյունաբերական ոլորտի ներկայացուցիչների մասնակցությունը, հատկապես թեմատիկ գիտահետազոտական աշխատանքներում: Գազաթնաժողովի մասնակիցները նաև ողջունում են Արևելյան գործընկերության շրջանակներում գիտահետազոտական և նորարարական գործունեության հարցերին նվիրված փորձագիտական խմբի ստեղծումը:

16. Գազաթնաժողովի մասնակիցները շեշտում են բնապահպանության կարևորությունը, որպես համագործակցության առաջնահերթ ոլորտ, որը փոխադարձ հետաքրքրություն է ներկայացնում ԵՄ և գործընկեր երկրների համար՝ ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ տնտեսության տեսանկյունից: Նրանք ողջունում են այն առաջընթացը, որն արձանագրվել է կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման, բնապահպանական կառավարման ամրապնդման և բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի իրականացման գործում: Նրանք ճանաչում են օժանդակող տարբեր ծրագրերի դերը բնապահպանության և կլիմայի փոփոխության հարցերով տարածաշրջանային համագործակցությունը խթանելու առումով, նաև Ռիո+20 գործընթացի համատեքստում, ներառյալ կայուն զարգացման նպատակների ձևավորումը:

17. Աղետային ռիսկերի նվազեցման հետ կապված, Գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են ռիսկերի տարածաշրջանային էլեկտրոնային ատլասի ստեղծումը և շեշտում են արտակարգ իրավիճակներում արձագանքի ԵՄ մեխանիզմներին գործընկեր երկրներին մոտեցնելու, ինչպես նաև աղետների հանդեպ դիմադրողականության, աղետների կանխարգելման և կառավարման կարողություններն ամրապնդելու կարևորությունը: Նրանք նաև ողջունում են քաղաքացիական պաշտպանության ոլորտում համագործակցության նպատակով Եվրոպական հանձնաժողովի և Մոլդովայի Հանրապետության միջև ստորագրված Վարչական պայմանավորվածությունը:

18. Տեղեկատվական հասարակության և զանգվածային լրատվամիջոցների ոլորտում Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են համապատասխան գործընկեր երկրների կողմից իրենց օրենսդրությունն ու կարգավորիչ դաշտը էլեկտրոնային հաղորդակցությանը վերաբերող ԵՄ օրենքներին և կանոնակարգերին մոտարկելու ուղղությամբ իրականացված աշխատանքները: Բացի այդ, մասնակիցները ողջունում են գործընկեր երկրներում կրթության և գիտահետազոտական գործունեության համար

էլեկտրոնային ենթակառուցվածքների հետագա զարգացման նպատակով իրականացված աշխատանքները:

19. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են արևելաեվրոպական գործընկերների աճող մասնակցությունը ԵՄ ծրագրերին և համագործակցությունը ԵՄ գործակալությունների հետ: Վերջին երկու տարիների ընթացքում որոշ գործընկերներ նաև մասնակցել են մի շարք ԵՄ ծրագրերի հատուկ բաղադրիչներին կամ նախագծերին: Մոլդովայի Հանրապետությունը ասոցացվել է գիտահետազոտական և տեխնոլոգիական մշակումների ԵՄ 7-րդ շրջանակային ծրագրի հետ: Նրանք ակնկալում են, որ առաջիկայում ուժի մեջ կմտնի Հայաստանին նոր ԵՄ ծրագրերին մասնակցելու հնարավորություն ընձեռող Արձանագրությունը: Նրանք ակնկալում են Ադրբեջանին և Վրաստանին ԵՄ ծրագրերին մասնակցելու հնարավորություն ընձեռող Արձանագրությունների ստորագրումը: Ստորագրվել են ԵՄ գործակալությունների հետ երկկողմ համագործակցության համաձայնագրեր, այդ թվում՝ Հայաստանի ու Մոլդովայի Հանրապետության կողմից՝ Ավիացիայի անվտանգության եվրոպական գործակալության (EASA) հետ, Վրաստանի ու Մոլդովայի Հանրապետության կողմից՝ Եվրոպական ոստիկանական քուլեջի (CEPOL) հետ, Մոլդովայի Հանրապետության կողմից՝ Թմրամիջոցների և թմրամոլների մոնիտորինգի եվրոպական կենտրոնի (EMCDDA), Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (OLAF) հետ, Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի կողմից՝ Ֆրոնտեքսի հետ:

20. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են մակրոտնտեսական կանոնավոր երկխոսությունները, ներառյալ գործընկեր երկրների հետ մակրոտնտեսական տեղեկատվության և վերլուծությունների փոխանակումը մակրոտնտեսական կառավարումն ամրապնդելու և տնտեսական կայունությանը նպաստելու նպատակով: 2011թ. սեպտեմբերից սկսած՝ ԵՄ իրականացրել է մակրոֆինանսական աջակցության ծրագրեր Մոլդովայի Հանրապետության և Հայաստանի հետ՝ վերջիններիս տնտեսական ճգնաժամին արձագանքելու նպատակով: Հաստատվել է Վրաստանին ուղղվող մակրոֆինանսական աջակցության վերաբերյալ օրենսդրական որոշումը, և ստորագրվել են Ուկրաինային տրամադրվող մակրոֆինանսական աջակցության մասին Փոխըմբռնման հուշագիրը, ինչպես նաև Վարկային համաձայնագիրը:

21. Գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են գործընկեր երկրներում ՓՄՁ քաղաքականության գնահատման, դիտարկման և իրականացման նպատակով կատարված աշխատանքներն ու նախագծերը՝ Եվրոպայի փոքր ձեռնարկությունների մասին ակտի (Small Business Act for Europe /SBA) սկզբունքներին համապատասխան:

22. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները արձանագրում են ԵՄ և Բելառուսի միջև ընդլայնված երկկողմ ոլորտային երկխոսությունները այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են տնտեսական և ֆինանսական համագործակցությունը, բնապահպանությունն ու կրթությունը: Նրանք խրախուսում են այդ ոլորտային երկխոսությունների հետագա զարգացումը:

23. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները վկայակոչում են Արևելյան գործընկերության շրջանակներում քաղաքացիական հասարակության արժեքավոր դերը: Նրանք ընդունում են, որ քաղաքացիական հասարակությունը հանդիսանում է արդյունավետ գործող ժողովրդավարական համակարգի անբաժան մասը: Նրանք ընդգծում

են քաղաքացիական հասարակության ներդրումը Արևելյան գործընկերության շրջանակներում իրականացվող բոլոր ծրագրերում, ներառյալ Քաղաքացիական հասարակության ֆորումի և դրա ազգային պլատֆորմների միջոցով: Նրանք ողջունում են քաղաքացիական հասարակությանը տրամադրվող աջակցությունը Հարևանության քաղաքացիական հասարակության գործիքի միջոցով: Նրանք ողջունում են 2013թ. հոկտեմբերի 4-ից 5-ը Քիշնևում կայացած Արևելյան գործընկերության քաղաքացիական ֆորումի 5-րդ հանդիպման արդյունքները և Քաղաքացիական ֆորումի մշտական քարտուղարության ստեղծումը: Նրանք ողջունում են Քաղաքացիական հասարակության ֆորումի 6-րդ հանդիպման անցկացումը Վրաստանում: Խրախուսելի է Քաղաքացիական հասարակության ֆորումի ներկայացուցիչների մասնակցությունը բազմակողմ պլատֆորմների հանդիպումներին:

24. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են նաև այլ շահագրգիռ կողմերի հետ ամրապնդված համագործակցությունը, այդ թվում Եվրանեստի, Տարածաշրջանային և տեղական իշխանությունների համաժողովի և Արևելյան գործընկերության բիզնես ֆորումի հետ:

25. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Արևելյան գործընկերության տեսանելիության բարձրացմանն ուղղված ջանքերը՝ շեշտելով տեսանելիության ռազմավարության իրականացումն ուժեղացնելու անհրաժեշտությունը, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներգրավվածությամբ: Նրանք կոչ են անում ջանքեր գործադրել Արևելյան գործընկերության վերաբերյալ արևելաեվրոպական գործընկերակրներում իրազեկության հետագա բարձրացման նպատակով: Նրանք ողջունում են Վրաստանի կառավարության կողմից 2014-2017թթ. համար հաղորդակցության և տեղեկատվության ռազմավարության ընդունումը: Նրանք ողջունում են Վարշավայի գազաթնաժողովից ի վեր գործընկեր երկրներում ստեղծվող ԵՄ տեղեկատվական կենտրոնների ավելացումը:

26. Գազաթնաժողովի մասնակիցներն ի գիտություն են ընդունում դոնորային համակարգմամբ և, ընդհանուր առմամբ, Արևելյան գործընկերության զարգացմամբ հետաքրքրված միջազգային ֆինանսական կառույցների և երրորդ երկրների հետ համագործակցությունը, ներառյալ ոչ-պաշտոնական Տեղեկատվական և համակարգման խմբի միջոցով, չսահմանափակելով երրորդ երկրների հետ համագործակցության սկզբունքները, ինչպես սահմանված են Պրահայի հռչակագրում:

Արևելյան գործընկերության հաջորդ փուլը

27. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները համաձայնում են Արևելյան գործընկերության՝ հաջորդ երկու տարիների համար ապագային միտված օրակարգի շուրջ, որը կամրապնդի և կզարգացնի քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման գործընթացը: Գործընկերությունը ականատես կլինի ԵՄ և համապատասխան գործընկերների համար մարտահրավերներով որակական անցմանը՝ համաձայնագրերի բանակցություններից դրանց արդյունավետ իրականացմանը: Գազաթնաժողովի մասնակիցները ճանաչում են, որ այս համաձայնագրերի իրականացումը՝ քաղաքականության, տնտեսության և հասարակության համապարփակ արդիականացմանն ուղղված հեռահար նպատակներով հանդերձ, զգալի քաղաքական կամք է պահանջելու անհրաժեշտ բարեփոխումները կատարելու նպատակով՝ ի շահ գործընկեր երկրների

քաղաքացիների: ԵՄ շարունակում է հանձնառու լինել այս գործընթացում գործընկերներին աջակցելուն, առաջընթացը գնահատելով ամենամյա Առաջընթաց գնահատող զեկույցների միջոցով, որոնք ներկայացվում են Հանձնաժողովի և Բարձր հանձնակատարի կողմից: Սա նաև կապահանջի գործընկեր երկրների իշխանություններից մեկնարկել տեղեկատվական և հաղորդակցման համապարփակ քարոզարշավներ՝ լայն հասարակական ներգրավվածություն ապահովելու նպատակով՝ ԵՄ կողմից համապատասխան օժանդակությամբ: Գազաթնաժողովի մասնակիցները շեշտում են երկկողմ հարաբերություններում տարբերակման կարևորությունը՝ համադրելով այն բազմակողմ համագործակցության հետագա ընդարձակման հետ:

28. Վկայակոչելով Պրահայի և Վարշավայի հռչակագրերում արտացոլված հակամարտությունների շուտափույթ խաղաղ կարգավորման վերաբերյալ հայտարարությունները, Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են ԵՄ մտադրությունը ամրապնդելու իր ներդրումը՝ կայունության և բազմակողմ վստահության ամրապնդման հետագա խթանման գործում առաջընթացը խրախուսելու նպատակով: Նրանք ողջունում են ԵՄ դերակատարման ամրապնդումը հակամարտությունների կարգավորմանն ու վստահության ամրապնդմանն ուղղված ջանքերում՝ գոյություն ունեցող համաձայնեցված ձևաչափերի և գործընթացների շրջանակներում կամ ի աջակցություն վերջիններիս, ներառյալ, համապատասխան դեպքերում, տեղում ներկայացվածություն ապահովելու միջոցով: Նրանք ընդգծում են հակամարտությունների շուտափույթ խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի հիման վրա: Նրանք ողջունում են Հայաստանի և Ադրբեյջանի նախագահների միջև, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ Վիեննայում վերջերս կայացած հանդիպումը և նախագահների համաձայնությունն առաջ տանել բանակցությունները Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ: Մասնակիցներն աջակցում են Հարավային Կովկասի ու Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցչի գործունեությանը: Նրանք ընդգծում են 2008թ. օգոստոսի 12-ի հրադադարի համաձայնագրի լիակատար իրականացման անհրաժեշտությունը և Վրաստանում ԵՄ դիտարկման առաքելության՝ տեղում ներկայացված լինելու կարևորությունը: Մասնակիցները շեշտում են ԵՄ դիտարկման առաքելության մանդատի լիակատար իրականացման անհրաժեշտությունը և վերահաստատում են Ժնևի միջազգային քննարկումներին իրենց աջակցությունը: Մասնակիցները շեշտում են Մերձդնեստրյան հակամարտության կարգավորման հարցում առաջընթացի կարևորությունը և ակնկալում են բանակցությունների՝ «5+2» ձևաչափով առաջխաղացումը համաձայնեցված օրակարգի բոլոր երեք փաթեթներով, մասնավորապես, ինստիտուցիոնալ, քաղաքական և անվտանգության հարցերով: Նրանք նաև բարձր են գնահատում Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի միջև ԵՄ սահմանային աջակցության առաքելության կարևոր և շարունակական ներդրումը:

29. Գազաթնաժողովի մասնակիցները ի գիտություն են ընդունում, որ ԵՄ շարունակում է ներգրավված լինել Բելառուսի հասարակության հետ «Արդիականացման շուրջ եվրոպական երկխոսության» միջոցով, և որ ԵՄ ու Բելառուսի կառավարության միջև փոխանակումներ են ընթանում արդիականացման հարցերի շուրջ համագործակցության ապագա լավագույն ձևը որոշելու նպատակով:

Ասոցացման համաձայնագրեր և ԽՀԱԱԳ-ներ

30. Գազաթնաժողովի մասնակիցները շեշտում են ԵՄ և շահագրգիռ գործընկեր երկրների միջև Ասոցացման համաձայնագրերի, ներառյալ ԽՀԱԱԳ, ստորագրման, ժամանակավոր կիրառման և վավերացման ուղղությամբ հնարավոր սեղմ ժամկետներում քայլեր ձեռնարկելու կարևորությունը: Նրանք ընդգծում են, որ Ասոցացման համաձայնագրերի/ԽՀԱԱԳ իրականացումը հիմնարար փոփոխություն կնշանավորի ԵՄ հետ ավելի խորացված քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման ուղղությամբ: Այս համատեքստում համաձայնագրերի արդյունավետ իրականացումը և գործընկեր երկրների տնտեսությունների ԵՄ ներքին շուկային աստիճանական ինտեգրումը կամրապնդի միջազգային շուկաներում գործընկեր երկրների կողմից արդյունավետ մրցակցելու կարողությունը, անմիջական օգուտներ կբերի սպառողներին, ինչպես նաև տեղական և օտարերկրյա ներդրողներին և ձեռնարկատերերին, ի թիվս այլոց, հանրային ծառայությունների արդիականացման, մրցակցային քաղաքականության, մտավոր սեփականության, սննդի անվտանգության, սպառողների շահերի պաշտպանության, մաքսային ոլորտի, պետական գնումների, ծառայությունների և ճանապարհային անվտանգության ոլորտներում ԵՄ նորմերին և չափանիշներին մոտարկման շնորհիվ: Նրանք ընդգծում են, որ ԽՀԱԱԳ շուրջ իրական առաջընթացը հնարավոր կլինի միայն այնպիսի տնտեսությունների համար, որտեղ ողջունելի է մրցակցությունը, գործում են արդյունավետ ինստիտուտներ, և առկա է անվտանգ գործարար և ներդրումային միջավայր երաշխավորող իրավական շրջանակ:

31. 2014-2015թթ. շահագրգիռ գործընկեր երկրների համար համագործակցությունն ու երկխոսությունը կառուցվելու է Ասոցացման համաձայնագրի/ԽՀԱԱԳ դրույթների իրականացման շուրջ՝ կենտրոնանալով, մասնավորապես, ԵՄ նորմերին և ստանդարտներին մոտարկման վրա: Ակնկալվում է, որ ԵՄ և արևելաեվրոպական գործընկեր երկրները համատեղ կձեռնարկեն և կիրականացնեն նախապատրաստական մի շարք աշխատանքներ, այդ թվում՝ ուղղված գործընկեր երկրների ինստիտուտների ամրապնդմանը՝ ճանապարհ հարթելով Ասոցացման համաձայնագրերի/ԽՀԱԱԳ հավելվածներով նախատեսված որոշակի միջոցառումներն իրականացնելու համար:

Ոլորտային համագործակցություն

32. Արևելյան գործընկերության շարժունակության օրակարգը կարևոր առաջնահերթություն է լինելու 2014-2015թթ. ժամանակահատվածի համար: Գազաթնաժողովի մասնակիցներն ակնկալում են առանձին գործընկեր երկրների հետ վիզաների ազատականացված ռեժիմի ուղղությամբ առաջընթացը՝ համապատասխան ընթացակարգով, հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունները և պայմանով, որ ապահովված կլինեն լավ կառավարվող և անվտանգ շարժունակության համար պահանջները:

Մինևույն ժամանակ, նրանք խրախուսում են վիզաների դյուրացման համաձայնագրերի լիակատար իրականացումն ու խրախուսում են ԵՄ անդամ պետություններին կիրառել ԵՄ Մուտքի վիզաների կանոնակարգի ընձեռած ճկուն հնարավորությունները:

33. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները իրենց հանձնառությունն են հայտնում էլ ավելի ամրապնդել երկկողմ և բազմակողմ համագործակցությունն ու համակարգումը շահագրգիռ արևելաեվրոպական գործընկերների հետ՝ ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտներում: Միգրացիայի և շարժունակության գլոբալ մոտեցմանը

համապատասխան՝ երկխոսությունն ու համագործակցությունը ներառելու է անվտանգ և լավ կառավարվող միգրացիայի և շարժունակության խրախուսումը, ապօրինի միգրացիայի և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարն ու կանխարգելումը, զարգացման վրա միգրացիայի ազդեցության ավելացումն ու միջազգային պաշտպանության ամրապնդումը: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները արտահայտում են կազմակերպված և անդրազգային հանցավորության, թմրամիջոցների, կոռուպցիայի և կիրքերի անցագործության դեմ պայքարին և կանխարգելմանն ուղղված, ինչպես նաև իրավապահ մարմինների միջև համագործակցության կարևորությունը: Նախարարական մակարդակով հետագա հանդիպումների կազմակերպումը կնպաստի համապատասխան քաղաքական ուղղորդում և համակարգում ապահովելուն: Արևելյան գործընկերության՝ միգրացիայի և ապաստանի հարցերով փորձագիտական խումբը նպաստելու է շարժունակության ընդլայնված օրակարգի շուրջ համագործակցության և երկխոսության ամրապնդմանը: Կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբը կնպաստի կոռուպցիայի կանխարգելմանն ու կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված միջոցների և գործիքների մշակմանն ու իրականացմանը: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները խրախուսում են արևելաեվրոպական գործընկերների և ԵՄ գործակալությունների միջև արդարադատության և ներքին գործերի ոլորտին առնչվող համագործակցության հետագա ամրապնդումը:

34. Տրանսպորտի ոլորտի վերաբերյալ գազաթնաժողովի մասնակիցները ակնկալում են կոնկրետ գործողությունների իրականացում, որոնք ԵՄ և գործընկեր երկրների միջև տրանսպորտը կդարձնեն ավելի ապահով, ավելի արդյունավետ և կայուն, և որոնք դրական ազդեցություն կունենան առևտրային հոսքերի վրա: Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները շեշտում են Ուկրաինայի հետ Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի հնարավորինս սեղմ ժամկետներում կնքումը և ուժի մեջ մտնելը, նշում են Ադրբեյջանի հետ ավիացիայի շուրջ բանակցությունների մեկնարկը և ակնկալում են Հայաստանի հետ նմանատիպ բանակցությունների մեկնարկ: Գազաթնաժողովի մասնակիցները ակնկալում են ապագայում Արևելյան գործընկերության տրանսպորտի տարածաշրջանային ցանցում ներքին ջրուղիների ներառումը: Նրանք շեշտում են Վրաստանի և Մոլդովայի հետ ԵՄ Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրերի համապատասխան ժամկետներում վավերացման կարևորությունը: Տրանսպորտի ոլորտում համագործակցության հետագա քայլերը կկենտրոնացվեն բոլոր տրանսպորտային ռեժիմների կարգավորիչ մոտարկման և եվրոպական ու միջազգային ֆինանսական կառույցների աջակցությամբ առաջնային նախագծերի իրականացման շուրջ:

35. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները, վկայակոչելով իրենց էներգետիկ փոխկախվածությունը և փոխադարձ էներգետիկ անվտանգությունն ամրապնդելու ընդհանուր շահագրգռվածությունը, ներառյալ Արևելյան գործընկերության շրջանակներում, հաստատում են իրենց մտադրությունը խորացնել երկկողմ և բազմակողմ համագործակցությունը: Շուկայական ինտեգրումը հնարավոր է զարգացնել ամբողջացնելով ԵՄ ներքին շուկան, ներառյալ փոխկապակցվածությունները, և, համապատասխան դեպքերում, ԽՀԱԱԳ և էներգետիկ համայնքի համաձայնագրի, ինչպես նաև այլ համապատասխան իրավական գործիքների, ինչպես, օրինակ, էներգետիկ խարտիայի պայմանագրի իրականացմամբ: Մասնակիցները համաձայնում են համագործակցել համատեղ հետաքրքրություն ներկայացնող էներգետիկ ենթակառուցվածքների հետագա

զարգացման շուրջ, ներառյալ առկա գործիքների շրջանակներում ԵՄ ավելի մեծ աջակցության միջոցով, գործընկերների և ԵՄ էներգետիկ շուկայի միջև փոխկապակցվածությունների կառուցման և արդիականացման համար: Մասնակիցները նշում են էներգետիկ արդյունավետությանն ուղղված ջանքերի հետևողական ամրապնդման և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման առանցքային կարևորությունը, այդ թվում նաև կանաչ էներգետիկայի տեխնոլոգիաների բնագավառում կարողությունների ստեղծման միջոցով: Նրանք աջակցում են «քաղաքապետերի դաշնագրի» հնարավոր ամենասերտ ներգրավմանը և ողջունում են Արևելյան Եվրոպայի էներգետիկ արդյունավետության և բնապահպանության գործընկերությունն (E5P) ընդլայնելու վերաբերյալ որոշումը, որը, ի լրումն Ուկրաինայի, կներառի նաև Հայաստանը, Վրաստանը և Մոլդովայի Հանրապետությունը: Մասնակիցները ողջունում են միջուկային անվտանգության ոլորտում առավել ընդլայնված համագործակցության հեռանկարները: Նրանք ակնկալում են միջուկային «սթեյս թեստերի», ներառյալ դրանց արդյունքում ստացված առաջարկությունների իրականացումը:

36. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները հայտնում են իրենց հանձնառությունը մաքսային ոլորտում համագործակցության հետագա ամրապնդման առումով՝ ներառյալ սահմանների համալիր կառավարման միջոցով: Համագործակցությունը կկենտրոնանա ապահով և սահուն առևտրային ուղիների զարգացման վրա, խթանելով ռիսկերի կառավարումը, խարդախության դեմ պայքարը և տարածաշրջանի մաքսային ոլորտի արդիականացմանն ուղղված ներդրումները:

37. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ընդգծում են մարդկանց միջև շփումների կարևորությունը Գործընկերության նպատակներին հասնելու համար: Բարձրագույն կրթության և երիտասարդության ոլորտում ԵՄ աջակցությունը նպատակ կունենա ավելացնել բարձրագույն կրթական հաստատությունների և գործընկեր երկրների ուսանողների մասնակցությունը նոր «Էրազմուս+» ծրագրին: Աջակցությունը Մարի Սկլոդովսկայա-Կյուրի ծրագրերին կշարունակվի և, հնարավորության դեպքում, պետք է ընդլայնվի: Երիտասարդության հարցերով համագործակցությունը, ներառյալ «Էրազմուս+» շրջանակներում, թույլ կտա ավելացնել երիտասարդների զբաղվածությունը և ժողովրդավարական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցությունը: Գազաթնաժողովի մասնակիցները նաև կարևորում են մշակույթի բնագավառում համագործակցության հնարավորությունները, որոնք բացվում են «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի միջոցով: Արևելաեվրոպական գործընկերների մշակութային քաղաքականության արդիականացման շուրջ երկխոսությունը կշարունակվի: Առողջապահության քաղաքականության շուրջ երկխոսությունը նույնպես կշարունակվի՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ինչպես վարակիչ, այնպես էլ ոչ վարակիչ հիվանդություններին և առողջապահական անվտանգությանը:

38. Գյուլատնտեսության և գյուղական զարգացման ոլորտում համագործակցությունը ընդլայնելու նպատակով՝ գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Մոլդովայի Հանրապետության մտադրությունը 2014թ. հունվարին հյուրընկալելու Արևելյան

գործընկերության գյուղատնտեսության նախարարների համաժողովը, որի նպատակն է, համապատասխան դեպքերում, խրախուսել ԵՄ օրենսդրության հետ մոտարկումը, աջակցել Արևելյան գործընկերության երկրներում գյուղատնտեսության և գյուղական ոլորտի բարեփոխումներին և շարունակել զարգացնել այս ոլորտում ԵՄ հետ համագործակցությունը, մասնավորապես, Գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման ծրագրի մոտեցումներով: Գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման ծրագրի իրականացման սկզբունքների թվում նրանք ընդգծում են քաղաքացիական հասարակության ներգրավվածության կարևորությունը և գործընկերների պատասխանատվությունը: Վիլնյուսի գագաթնաժողովի մասնակիցները շեշտում են սննդի անվտանգության, կենդանիների և բույսերի առողջության բնագավառներում համագործակցության և այս ոլորտներին տեխնիկական և ֆինանսական աջակցությունը շարունակելու կարևորությունը՝ հասանելի գործիքների միջոցով:

39. Վիլնյուսի գագաթնաժողովի մասնակիցները վկայակոչում են գիտահետազոտական և նորարար գործունեության կարևորությունը՝ որպես սոցիալ-տնտեսական աճի առանցքային շարժիչ, և շեշտում են այդ բնագավառներում ամրապնդված համագործակցության կարևորությունը՝ Գիտելիքի և նորարարությունների ընդհանուր տարածքի ստեղծմանը հասնելու համար: Նրանք հատկապես ընդգծում են արևելաեվրոպական գործընկեր երկրների հետազոտությունների և նորարարությունների ոլորտում կարողությունների ամրապնդմանն ուղղված աջակցության անհրաժեշտությունը, ինչպես նաև առավել ընդլայնված համագործակցությունը ԵՄ առաջիկա «Հորիզոն 2020» ծրագրում:

40. Վիլնյուսի գագաթնաժողովի մասնակիցները շեշտում են բնապահպանության և կլիմայի փոփոխության ոլորտում առավել սերտ համագործակցության ռազմավարական կարևորությունը և անհրաժեշտությունը՝ որպես առաջնահերթ գործունեություն: Նրանք ընդգծում են այս ոլորտներում կարգավորիչ մոտարկման և քաղաքականության ներդաշնակեցման գործընթացն առաջ տանելու անհրաժեշտությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանաչ տնտեսությանը, կենսաբազմազանությանը, ընդհանուր բնապահպանական տեղեկատվական համակարգին և բնապահպանական գնահատումներին, բնապահպանական նկատառումներն այլ ոլորտներում ներառելուն և քաղաքացիական հասարակության նշանակալից դերին: Նրանք կոչ են անում լիարժեք և արդյունավետ իրականացնել բազմակողմ բնապահպանական համաձայնագրերը և շարունակական ջանքեր գործադրել կանաչ տնտեսություններ խթանելու ուղղությամբ, այդ թվում՝ Ռիո+20 «Ապագա, որը մենք ցանկանում ենք» հռչակագրին համաձայն: Նրանք կարևորում են Արևելյան գործընկերության հասարակությունների և տնտեսությունների ներգրավվածությունը ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ու կլիմայի փոփոխությանն ընտելացման ուղղությամբ իրենց համապատասխան գործողությունները խթանող միջոցառումներին և համագործակցությանը:

Այս համատեքստում նրանք վճռականորեն հաստատեցին իրենց ներգրավվածությունը կլիմայի փոփոխության գլոբալ համաձայնագրի մշակմանը, որը պետք է ընդունվի 2015թ. Փարիզում՝ ուժի մեջ մտնելով և իրականացվելով 2020թ-ից: Նրանք շեշտում են ԵՄ

օժանդակությունը շարունակելու անհրաժեշտությունը, հատկապես լիովին գործող Ընդհանուր տեղեկատվական բնապահպանական համակարգի ներդրման տեսակետից, և հետագա հավակնոտ գործողությունները հնարավոր դարձնելու համար՝ մինչև 2020թ. և երկարաժամկետ կտրվածքով, ինչպես նաև տարածաշրջանային բնապահպանական նախաձեռնությունների ամրապնդման անհրաժեշտությունը:

41. Տեղեկատվական հասարակության և մեդիա ոլորտի քաղաքականության զարգացման վերաբերյալ, որը համընդհանուր և եվրոպական արժեքների, քաղաքական կայունության, տնտեսական աճի և սոցիալական արդարության խրախուսման գործիք է, Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում և քաջալերում են շարունակել ԵՄ աջակցությամբ կարողությունների ամրապնդումը էլեկտրոնային հաղորդակցության կանոնակարգման ոլորտում, խթանելով դրան առնչվող քաղաքականությունը, այդ թվում՝ էլեկտրոնային ստորագրության, էլ.առողջապահության և զանգվածային լրատվամիջոցների հետ կապված՝ նպատակ ունենալով ստեղծել փոխգործակցող միջսահմանային ծառայությունների համար ընդհանուր տարածք: Նրանք նաև ակնկալում են գործընկերների մասնակցությունը «Հորիզոն 2020» ծրագրի համապատասխան հատվածում և նրանց ընդլայնված ներգրավվածությունը կրթության և հետազոտությունների էլեկտրոնային ենթակառուցվածքներում:

42. Գազաթնաժողովի մասնակիցները կարևորում են ԵՄ ծրագրերում արևելաեվրոպական գործընկերների մասնակցության հետագա զարգացումը և նրանց համագործակցությունը ԵՄ գործակալությունների հետ:

Բազմակողմ համագործակցության ամրապնդում

43. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ճանաչում են բազմակողմ համագործակցության դերը ավելի խորը երկկողմ հարաբերություններին նպաստելու հարցում: Հաշվի առնելով երկկողմ հարթության շրջանակներում բանակցությունների փուլից դեպի իրականացման փուլ աստիճանաբար կատարվող անցումը, կարևոր է լինելու երկկողմ և բազմակողմ ձևաչափերի միջև կապն այնպես ամրապնդել, որպեսզի բազմակողմ ձևաչափը շարունակի աջակցել գործընկերների կողմից մոտարկմանն ուղղված ջանքերին: Բազմակողմ ձևաչափի աշխատանքը պետք է արդյունավետ համադրվի երկկողմ համագործակցության հետ և սիներգետիկ փոխգործակցություն խրախուսի: Միևնույն ժամանակ բազմակողմ ձևաչափը այն հարթակն է, որտեղ հնարավոր են ԵՄ և բոլոր վեց գործընկերների միջև փոխանակումները, և, հետևաբար, դրանց օրակարգերը պետք է ընդգրկուն լինեն և խրախուսեն բոլոր կողմերի ակտիվ մասնակցությունը: Բազմակողմ պլատֆորմների վերջերս ընդունված նոր Աշխատանքային ծրագրերն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ նկատառումները: Ողջունելով ոլորտային նախարարական հանդիպումները՝ արդարադատության ու ներքին գործերի և տրանսպորտի բնագավառներում, նրանք քաջալերում են նախարարական մակարդակով հանդիպումներ կազմակերպելու շարունակականությունը՝ հիշյալ և, համապատասխանաբար, այլ ոլորտներում, կանոնավոր հիմքով: Հիմնվելով Գործընկերության արդեն գոյություն ունեցող

ոչ պաշտոնական երկխոսության ձևաչափի վրա, Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները որոշեցին մեկնարկել արտաքին քաղաքականության կառուցվածքային երկխոսություն, ներառյալ, համապատասխանաբար, նախարարական և բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով կանոնավոր հանդիպումների ամրապնդումը: Նրանք ողջունում և ակնկալում են փոխլրացնող և ամրապնդող ազգային ծրագրեր, ինչպիսիք են, ի թիվս այլոց, Արևելյան գործընկերության Էստոնական կենտրոնը, որը զբաղվում է վարչական կարողությունների զարգացմամբ, ինչպես նաև Վարշավայի Արևելյան գործընկերության Հանրային կառավարման ակադեմիան:

44. Վկայակոչելով Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության բնագավառում համագործակցության կարևորությունը, Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ակնկալում են բազմակողմ և երկկողմ անվտանգության երկխոսության հետագա ամրապնդում և գործնական համագործակցություն ԸԱՊՔ բնագավառում ԵՄ և շահագրգիռ գործընկեր երկրների միջև, հատկապես ԸԱՊՔ փորձագիտական խմբի կատարելիք աշխատանքի միջոցով: Նրանք ընդգծում են այն դերը, որ նման հարթակը կարող է խաղալ համագործակցության զարգացմանն աջակցելու գործում՝ շահագրգիռ գործընկեր երկրների հետ Մասնակցության շրջանակային համաձայնագրով կարգավորվող ոլորտներում: Նրանք ողջունում են ԵՄ առաջնորդությամբ ռազմածովային (EUNAVFOR) Ատլանտա գործողությանը 2014թ. հունվարից Ուկրաինայի կողմից ֆրեգատի տրամադրումը, ինչպես նաև Վրաստանի և Մոլդովայի Հանրապետության պատրաստակամությունը ներդրում ունենալ ԵՄ առաջնորդությամբ իրականացվող գործողություններում, որոնց նրանք վերջերս հրավիրվել են: Նրանք նաև գնահատում են Ուկրաինայի հանձնառությունը ներդրում ունենալ ԵՄ մարտական խմբերին 2014 և 2016թ-ին:

45. Նրանք նաև ընդգծում են Արևելյան գործընկերության բազմակողմ ձևաչափի կարևորությունը գործընկերների միջև, ինչպես նաև ԵՄ հետ համագործակցության ամրապնդման առումով, ներառյալ տարածքային համագործակցության, հատկապես միջսահմանային համագործակցության միջոցով:

46. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները հրավիրում են Եվրոպական հանձնաժողովին շարունակել տեսանելի և արդյունավետ Առաջատար նախաձեռնությունների խրախուսումն ու ամրապնդումը, հավելյալ արժեք հաղորդելով գոյություն ունեցող համագործակցությանը՝ ԵՄ անդամ պետությունների և գործընկեր երկրների ընդլայնված մասնակցությամբ: Նրանք կնպաստեն Գործընկերության ընձեռած շոշափելի օգուտները քաղաքացիների համար տեսանելի դարձնելուն՝ գործնական նախագծերի միջոցով:

47. Գործընկեր երկրներում գործարար միջավայրը բարելավելու համար Արևելյան գործընկերության բազմակողմ հարթության շրջանակներում տրամադրվելու է հետագա օժանդակություն՝ ուղղված կայուն ՓՄՁ քաղաքականության գնահատմանն ու իրականացմանը:

48. Ճանաչելով Արևելյան գործընկերության բազմակողմ համագործակցության կարևորությունը՝ գազաթնաժողովի մասնակիցները շեշտում են տարբեր համապատասխան տարածաշրջանային նախաձեռնությունների և ցանցերի միջև ներդաշնակություն ապահովելու կարևորությունը: Նրանք հիշատակում են, որ Արևելյան գործընկերությունը կարող է օգտակար լինել հենց գործընկեր երկրների միջև սերտ կապեր զարգացնելու համար:

49. Մասնակիցները շեշտում են տարածաշրջանային համագործակցության զարգացման կարևորությունը՝ ԵՄ մակրո-տարածաշրջանային ռազմավարությունների իրականացմանը, համապատասխան դեպքերում, գործընկերների ներգրավվածության միջոցով: Նրանք նաև խրախուսում են արդյունավետ միջտարածաշրջանային և միջսահմանային համագործակցության շուրջ երկխոսության զարգացումը, ներառյալ Տարածքային համագործակցության եվրոպական խմբավորումը՝ գործընկերների սոցիալական և տնտեսական զարգացումը դյուրացնելու համար:

50. Գազաթնաժողովի մասնակիցները ընդգծում են տեղական ժողովրդավարության և քաղաքացիների մասնակցության նշանակալի դերը Արևելյան գործընկերության նպատակների իրականացման առումով: Տեղական ժողովրդավարության սկզբունքները հանդիսանում են համընդհանուր եվրոպական արժեք, ինչպես ամրագրված է Տեղական ինքնակառավարման եվրոպական կանոնադրության մեջ: Տեղական իշխանությունները հանրային ծառայությունների կարևոր մատակարարներն են: Մասնակիցները աջակցում են Արևելյան գործընկերության համապատասխան քաղաքականությունների և ռազմավարությունների իրականացման գործում տեղական և տարածքային իշխանությունների ընդգրկմանը և քաջալերում են ազգային ասոցիացիաների և տեղական ու տարածքային իշխանությունների ներկայացուցիչներին և տեղական իշխանությունների համաժողովին մեծացնել իրենց ներդրումը Արևելյան գործընկերությանը: Տեղական և տարածքային իշխանությունների դերը կարող է ամրապնդվել թիրախային աջակցության, ներառյալ կարողությունների հզորացման միջոցով:

Ֆինանսական աջակցություն

51. Գազաթնաժողովի մասնակիցները նշում են, որ նոր Եվրոպական հարևանության գործիքը (ԵՀԳ), որը հաջորդում է 2007-2013 Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքին, հանդիսանալու է ԵՄ ֆինանսական աջակցության հիմնական գործիքը ԵՄ հարևանության գործընկեր երկրների համար 2014-2020թթ. ժամանակահատվածի ընթացքում: Նրանք նկատում են, որ գործընկեր երկրները կշարունակեն ֆինանսական աջակցություն ստանալ՝ խրախուսման վրա հիմնված մոտեցմանը համապատասխան՝ ինչպես նախատեսված է Եվրոպական հարևանության քաղաքականության 2011թ. վերանայմամբ: Աջակցությունը կենտրոնանալու է մի քանի ոլորտների վրա, նպատակ ունենալով մեծացնել պատասխանատվությունը, որակը և արդյունքները՝ որպես հասարակության արդիականացմանն ու սոցիալական համերաշխությանը նպաստելու միջոց: Ասոցացման համաձայնագրերի, ներառյալ ԽՀԱԱԳ

դրույթների իրականացմանն ուղղված աջակցությունը, կարգավորող դաշտի արդյունավետ մոտարկումը ընկած է լինելու ԵՄ կողմից ԵՀԳ շրջանակներում տրամադրվող աջակցության հիմքում: Նրանք համաձայնում են, որ ԵՄ հետագա աջակցությունը պետք է հաշվի առնի Ասոցացման համաձայնագրերի, ներառյալ ԽՀԱԱԳ, ժամանակավոր կիրառումը և խրախուսում են այդ նպատակով անհրաժեշտ խորհրդակցությունների անցկացումը:

Բազմակողմ աջակցության համար երկու հատուկ նախաձեռնություններ՝ Հարևանության ներդրումային գործիքը և Միջսահմանային համագործակցությունը, շարունակելու են առանձին առաջնային ոլորտների համար ֆինանսական աջակցություն տրամադրել: Նրանք ակնկալում են ԵՀԳ շրջանակներում հիմնվել վերջերս մեկնարկած Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագրի արդյունքների վրա: Ընդգծելով արևելաեվրոպական գործընկերներին ֆինանսավորում տրամադրող բոլոր դոնորների աջակցության համակարգված լինելու կարևորությունը, Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները կոչ են անում Արևելյան գործընկերության բարեփոխումների օրակարգը հիմնական ուղենիշ համարել ընդհանուր ԵՄ աջակցության համար:

52. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են գործընկեր երկրների բարեփոխումներին աջակցելու նպատակով Եվրոպական ներդրումային բանկի և Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի կողմից արդեն կատարված և հետագայում կատարվելիք ներդրումները: Նրանք ողջունում են ԵՆԲ մտադրությունը զարգացնել իր գործունեությունը՝ հիմնվելով Արևելյան գործընկերության ֆինանսական նախագծերի շրջանակներում իր արտաքին վարկավորման մանդատի վրա, որն օգնում է կապել ԵՄ-ին արևելյան հարևանության հետ, խթանել զարգացումը և անդրադառնալ տարածաշրջանի մարտահրավերներին էներգետիկայի, բնապահպանության և տրանսպորտի ոլորտներում: Տնտեսական զարգացումը, նորարարություններն ու աշխատատեղերի ստեղծումը խթանելու նպատակով Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ակնկալում են Եվրոպական ներդրումային բանկի աշխատանքը՝ արևելաեվրոպական գործընկեր երկրներում ռիսկային կապիտալով գործառնություններին հետագա աջակցություն ցուցաբերելու հնարավոր տարբերակներ բացահայտելու համար՝ համագործակցելով տարածաշրջանում այս ոլորտում ակտիվ եվրոպական այլ ֆինանսական կառույցների հետ: Նրանք ողջունում են ԶՎԵԲ մտադրությունը շարունակել մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված աջակցությունը, մասնավորապես, ամրապնդելով ֆինանսական ոլորտը և դյուրացնելով ՓՄՁ-ների համար տեղական արժույթի փոխակերպված ֆինանսական միջոցների հասանելիությունը, կայուն էներգետիկային և հանրային ենթակառուցվածքներին աջակցությունը:

53. Ուկրաինայում և Վրաստանում մակրոֆինանսական աջակցության ծրագրերը կաճեն 2014-2015թթ, երբ կատարված կլինեն համապատասխան նախապայմանները, և ծրագրերը շաղկապված կլինեն բարեփոխումների իմաստալից օրակարգին: ԵՄ մակրոտնտեսական աջակցության գործիքը կարող է նաև կիրառվել հետագայում՝ վճարումների հավասարակշռի հետ կապված կարճաժամկետ դժվարությունները հաղթահարելու նպատակով գործընկեր

երկրներին աջակցություն ցուցաբերելու համար, երբ կատարված կլինեն նախապայմանները, և ծրագրերը շաղկապված կլինեն բարեփոխումների իմաստալից օրակարգի հետ: Արևելյան գործընկերության շրջանակներում շարունակական երկխոսությունը և վերլուծությունների և խորհրդատվության փոխանակումը կարող է բերել կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը, հարկաբյուջետային ոլորտի կարգավորմանը և, հետևաբար, տնտեսական գործունեության ամրապնդմանը:

54. Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները ընդգծում են քաղաքացիական հասարակության հետագա ամրապնդման անհրաժեշտությունը: Գազաթնաժողովի մասնակիցները նաև ճանաչում են քաղաքացիական հասարակության կարևոր դերը՝ քաղաքացիական հասարակության ֆորումի և դրա ազգային պլատֆորմների միջոցով, գործընկերների բարեփոխումների գործընթացներում խրախուսելով Արևելյան գործընկերության նպատակներին հասնելու շուրջ կառուցվածքային երկխոսությունը քաղաքացիական հասարակության և գործընկեր երկրի իշխանությունների միջև: Նրանք շեշտում են ըստ անհրաժեշտության համարժեք միջոցների հասանելիության շարունակականության կարևորությունը՝ աջակցելու կարողությունների զարգացմանը և բարեփոխումների ազգային գործընթացներում քաղաքացիական հասարակության հետագա ներգրավմանը:

55. Գազաթնաժողովի մասնակիցները ողջունում են Արևելյան գործընկերության Տեղական և տարածաշրջանային իշխանությունների համաժողովի կողմից արված քայլերը զարգացնելու համագործակցությունը կառավարության մակարդակում՝ քաղաքացուն ամենամոտ ձևով և հաշվի է առնում նրա՝ 2013թ. սեպտեմբերի 4-ից 5-ը Վիլնյուսում կայացած տարեկան հանդիպման արդյունքները: Գազաթնաժողովը նաև քաջալերում է ընդլայնված միջխորհրդարանական համագործակցությունը 2014-15թթ. Եվրոնեստ խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում:

56. Ողջունելով 2013թ. նոյեմբերի 28-ին Վիլնյուսում կայացած Բիզնես ֆորումի արդյունքները, Վիլնյուսի գազաթնաժողովի մասնակիցները հրավիրում են ԵՄ և գործընկեր երկրներում գործարար համայնքներին շարունակել զարգացնել Բիզնես ֆորումը և այդ հարթակը օգտագործել առաջարկվող տնտեսական նոր հնարավորությունները զարգացնելու համար: Նրանք նաև քաջալերում են սոցիալական հարցերով գործընկերներին (գործատուների կազմակերպություններին և արհեստակցական միություններին), ներառյալ, ըստ անհրաժեշտության, նաև Քաղաքացիական հասարակության ֆորումի միջոցով, միասին ավելի սերտ աշխատանքներ տանել՝ 2014-2015թթ. տնտեսական համապատասխանեցման և կարգավորիչ մոտարկման ոլորտում առաջընթաց գրանցելու համար: Նրանք ընդգծում են ներդրումները խրախուսելու, հետազոտությունների և արդյունաբերության միջև գործընկերության, ինչպես նաև կենսունակ և նորարար ՓՄՁ ոլորտի անհրաժեշտությունը՝ նպաստելու լայնածավալ, ներառական աճին և աշխատատեղերի ստեղծմանը: Նրանք շեշտում են ՓՄՁ-ների դերը գործընկեր երկրների տնտեսական զարգացման գործում և գործարարության համար նպաստավոր քաղաքականություն զարգացնելու և իրականացնելու անհրաժեշտությունը՝

ներդրումները դյուրացնելու համար: Նրանք ճանաչում են արդյունավետ գործող հասարակական երկխոսության ներդրումը սոցիալ-տնտեսական բարեփոխումներին և ընդգրկուն աճին աջակցելու առումով: Նրանք հայտնում են իրենց մտադրությունը ամրապնդել զբաղվածության և սոցիալական քաղաքականության բնագավառում համագործակցությունը, մասնավորապես, սոցիալական գործընկերների ներգրավվածությամբ:

.....

57. Նրանք հրավիրում են ԵՄ կառույցներին, ԵՄ անդամ պետություններին, արևելաեվրոպական գործընկերներին և այլ շահագրգիռ կողմերին իրենց ներդրումն ունենալ Արևելյան գործընկերության Տեսանելիության ռազմավարության իրականացման գործում՝ շարունակելով տեղեկացնել գործընկեր երկրների և ԵՄ հասարակությանը քաղաքացիների, գործարարների և լայն հասարակության համար Գործընկերությունից բխող օգուտների, Գործընկերության շրջանակներում կնքված համաձայնագրերի իրականացման մասին:

58. Գազաթնաժողովի մասնակիցները ակնկալիքով սպասում են 2015թ. առաջին կեսին Ռիգայում կայանալիք հաջորդ գազաթնաժողովին, որտեղ նրանք մտադիր են ամփոփել սույն Հռչակագրի և կնքված համաձայնագրերի իրականացումը և ուրվագծել Գործընկերության հետագա ուղին: